ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1961 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԷՐԱՍՈՒ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի և Գյուղատնտեսության մինիստրության Էկոնոմիկայի ու կազմակերպման ինստիտուտի գիտական խորհուրդների համատեղ նիստը՝ ԲՈՒՀ-երի տնտեսագիտական ամբիոնների մասնակցությամբ։ Նիստում քննարկվեց տնտեսագիտական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ս. Շ. Զուրաբյանի զեկուցումը «Համաժողովրդական սեփականության հետ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության մերձեցման և միաձուլման ուղիների մասին»։

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում համաժողովրդական սեփականության հետ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության մերձեցման հարցը ստանում է ոչ միայն տնտեսական խոշոր, այլև գործնական հրատապ նշանակություն։ Այդ հարցի շուրջը սովետական տնտեսագետների մեջ գոյություն ունեն տարբեր տեսակետներ՝ 1) ապրանքաշրջանառությունից մթերափոխանակության անցումը, 2) կոլտնտեսությունների սովխոզացումը, 3) մեքենա-տրակտորային կայանների դերի ուժեղացումը և 4) ներկայիս գյուղատնտեսական արտելի վերածումը ապագա կոմունայի։

Պրոֆեսոր Ս. Զուրաբյանը բնութագրելով այդ տեսակետները գտնում է, որ դրանք չեն կարող ճիշտ ուղի նշել՝ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու համար։ Նա տվյալ հարցի տեսական լուծումը կապում է կոլտնտեսային և պետական սեփականության ինչպես ընդհանրության, այնպես էլ տարբերության հետ, դրանք դիտելով ոչ թե ստատիկայի, այլ անընդհատ փոփոխման ու զարգացման մեջ։

Կոլտնտեսային և պետական համաժողովրդական սեփականությունը իրենց հիմքում միատիպ են, նրանց ընդհանուր գծերը գլխավորը և տիրապետողն են. զարգացման ընթացքում այդ ընդհանրությունը ավելի ու ավելի է գերակշռում, իսկ տարբերությունները, ընդհակառակն, աստիճանաբար վերացվում են։ Սոցիալիստական սեփականության երկու ձևերի միջև եղած տարբերությունների վերացումը իրագործվում է ոչ թե կոլտնտեսային սեփականության կծկման, այլ ինչպես պետական. համաժողովրդական սեփականության, այնպես էլ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության զարգացման ու ընդլայնման միջոցով։ Այդ պրոցեսը ընդգրկում է բանվոր դասակարգի ու կոլտնտեսային գյուղացիության փոխհարաբերության արմատական հարցերը։ Ինչպես Ն. Ս. Խրուշչովը նշեց պարտիայի XXI համագումարում՝ «Մեկ համաժողովրդական սեփականության մեջ կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության միաձուլումը կազմակերպական-տնտեսական հասարակ միջոցառում չէ, այլ քաղաքի ու գյուղի միջև գոյություն ունեցող էական տարբերությունը հաղթահարելու խոշոր պրոբլեմի լուծում»։

Զեկուցողը նշում է, որ պետական, համաժողովրդական սեփականության հետ կոոպերատիվ կոլտնտեսային սեփականության մերձեցման ուղիներն են՝ 1) կոլտնտեսությունների խոշորացումը, 2) սովխոզների կազմակերպումը թույլ և ետ մնացող կոլտնտեսությունների բազայի վրա, 3) կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի աճը և նրանց բնույթի ու կառուցվածքի փոփոխությունը՝ հանրային տնտեսության զարգացմանը զուգընթաց, 4) միջ-կոլտնտեսային տնտեսական կապերի զարգացումը, միասնական արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը պետության ու կոլտնտեսությունների կողմից և այլ համատեղ տնտեսական միջոցառումները, 5) բաշխման նոր ձևերի (ավանսավորման, դրամական վարձատրության) առաջացումն ու զարգացումը կոլտնտեսություններում, 6) կոլտնտեսականների տնամերձ տնտեսության աստիճանաբար վերացումը և 7) պետական, համաժողովրդական սեփականության դերի ու տեսակարար կշռի մեծացումը գյուղատնտեսական արտադրության մեջ։ Զեկուցողը սխալ է համարում մի շարք տնտեսագետների այն կարծիքը, որ սոցիալիստական սեփականության երկու ձևերի, ինչպես և բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև եղած տար-

բերության վերացումը հնարավոր է մինչև կոմունիզմին անցնելը, սոցիալիզմի զարգացման մի ինչ որ աստիճանում։ Միայն այն ժամանակ, երբ հասարակությունը կդառնա նաև կոլտնտեսային արտադրության սեփականատերը և նրա արտադրանքը համաժողովրդական սեփականության արտադրանքի հետ միասին պլանաչափորեն կբաշխվի ըստ սահանջմունքների՝ գյուղի և քաղաքի, արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատողների միջև, վերջնականապես կվերանա նաև սոցիալիստական սեփականության երկու ձևերի տարբերությունը։

Մտքերի փոխանակության ընթացքում բնկ. բնկ. Լ. Հարությունյանը, Ա. Այրումյանը (Գյուղատնտեսության Էկոնոմիկայի և կազմակերպման ինստիտուտ), Մ. Բաղալյանը (Պետական Համալսարան), Վ. Աղուզումցյանը (Մանկավարժական ինստիտուտ), Ս. Միքայելյանը և Ս. Կարապետյանը (Տնտեսագիտության ինստիտուտ) պաշտպանելով զեկուցողի հիմնական դրույթները, միաժամանակ ընդգծեցին, որ սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցման ու միաձուլման հարցը պետք է կապել կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման և արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների հետագա զարգացման ամբողջական պրոցեսի հետ՝ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ու ոլորտներում։ Ըստ նրանց բացառված չէ այն հնարավորությունը, որ սեփականության երկու ձևերի միաձուլումը կարող է ավելի վաղ կատարվել, քան կոմունիզմի լիակատար կառուցումը։ Նրանք հանգամանորեն կանգ առան այդ գործում միջկոլտնտեսային և այլ համատեղ ձեռնարկումների, հատկապես գյուղում զարգացող արդյունաբերության և դրանց նպատակների համար օգտագործվող կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի վճռական դերի վրա։ Ըստ նրանց կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը ոչ թե վերածվելու է պետական սեփականության, այլ այդ երկուսը միաձուլվելու են մեկ միասնական համաժողովրդական կոմունիստական սեփականության մեջ։ Հետևապես սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցումն ու միաձուլումը ոչ թե միաժամանակյա ու միակողմանի, այլ աստիճանական ու երկկողմանի պրոցես է, որի մեջ համակողմանիորեն զարգանում ու կատարելագործվում է թե մեկը և թե մյուսը։

Պրոֆեսոր Հ. Թումանյանը (Պետական համալսարան) և տնտեսագիտական գիտությունների թեկնածուներ Պ. Ոսկերչյանը (Գյուղատնտեսական ինստիտուտ), Մ. Գարագաշը (Անասնաբուժական ինստիտուտ) և Վ. Ներկարարյանը (Մանկավարժական ինստիտուտ) իրենց ելույթներում առարկեցին զեկուցողին, որը գտնում էր, թե նախ կատարվում է սեփականության երկու ձևերի մերձեցում և ապա միաձուլում։ Ըստ նրանց, այդ երկու պրոցեսները տեղի են ունենում միաժամանակ և որպես դրա ապացույց վկայակոչում էին կոոպերատիվ արդյունաբերության ձեռնարկությունների միաձուլումը պետական արդյունաբերության մեջ և բազմաթիվ ինչպես ետ մնացող, այնպես էլ առաջավոր կոլտնտեսությունների վերածումը սովխոզների։ Դրանք պաշտպանեցին կոլտնտեսությունների սովխոզացման թեորիան։

Ընկերներ Ա. Ջրաղացպանյանը (Տնտեսագիտության ինստիտուտ), Կ. Բոստանջյանը (Մանկավարժական ինստիտուտ), Հ. Բունյաթյանը (Անասնաբուժական ինստիտուտ), Է. Գևորգիմյանը (Անասնապահության ինստիտուտ), Հ. Հովակիմյանը (Պետհամալսարան) և Մ. Գևորգյանը (Գյուղատնտեսական ինստիտուտ) իրենց ելույթներում կանգ առան գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացման մի քանի հարցերի վրա, որոնք բխում են ՍՄԿՊ Կենտկոմի Հունվարյան պլենումի որոշումներից և նշեցին, որ դրանց կենսագործումը կյանքում՝ կնպաստի կոլտնտեսային սեփականության հանրայնացման աստիճանի բարձրացմանն ու նրա մերձեցմանը համաժողովրդական սեփականության հետ։

Պրոֆեսոր Ջ. Բաշինջաղյանը իր ելույթում առաջ քաշեց մի շատ կարևոր ու հետաքրքիր հարց այն մասին, որ տնտեսագետները պետք է ուշադրություն դարձնեն ոչ միայն տնտեսական պրոցեսների, այլ նաև ապագա մարդու, կոմունիստական հասարակության աշխատավորի ձևավորման հարցերի վրա։ Չէ՞ որ սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցումը ու նրանց միաձուլումը մեկ համաժողովրդական կոմունիստական սեփականության մեջ տեղի է ունենում նրանցում գրաղված մարդկանց հետ միասին։ Հետևապես վերջիններս նույնպես, անշուշտ, պետք է ենթարկվեն հոգեբանական փոփոխության, որպեսզի կարողանան համընթաց գալել կոմունիստական հասարակության արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հետ։

Դիսկուսիայում մասնակցեցին նաև ՀՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Հ. Ազատյանը և ակադեմիկոս Ա. Առաբելյանը, որոնք իրենց ելույթներում կանգ առան մի շարք վիճելի հարցերի վրա, կապված քաղաքի ու գյուղի միջև գոյություն ունեցող էական տարբերությունների վերաց-

ման և սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցման ու նրանց մեկ միասնական համաժողովրդական կոմունիստական սեփականության մեջ միաձուլելու հետ։

Զեկուցողը վերջում ամփոփեց մարերի փոխանակությունը և կանգ առավ այն առարկությունների վրա, որոնք արվեցին նրա զեկուցման և թեզերի վերաբերյալ։

Տվյալ հարցի քննարկումը ցույց տվեց, որ մեզ մոտ նույնպես գոյություն ունեն տարբեր կարծիքներ սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցման ու միաձուլման հարցի վերաբերյալ։ Հետևապես նրա քննարկումը կշարունակվի նաև հետագայում։

Ս. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

* * *

ՍՍՌ ապրիլի 19-ին տեղի ունեցավ ՀՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի և Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի համատեղ գիտա-արտադրական կոնֆերանսը, նվիրված գործարանի ներարտադրական ռեզերվների հայտնաբերման և օգտագործման հարցերին։

Գիտա-արտադրական կոնֆերանսը բաց արեց Տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր ակադեմիկոս՝ Ա. Ա. Առաքելյանը, որը իր բացման խոսքում ընդգծեց ներարտադրական ռեզերվների հայտնաբերման և օգտագործման ժողովրդատնտեսական մեծ նշանակությունը։

«Ֆ. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանում մետաղահատ հաստոցների արտադրության զարգացման և կատարելագործման հեռանկարները» զեկուցումով հանդես եկավ գործարանի դիրեկտոր Ս. Մնացականյանը։ Կանգ առնելով գործարանի զարգացման պատմության վրա, նա ցույց տվեց, թե ինչպես տեխնիկական պրոգրեսը մեքենաշինության մեջ, մասնավորապես հաստոցաշինության մեջ պահանջեց վերանայել գործարանի կողմից թողարկվող հաստոցների կոնստրուկցիան։ Յոթնամյակի ընթացքում անշեղ կաճի հատուկ և ճշգրիտ հաստոցների տեսակարար կշիռը։ Զեկուցողը կանգ առավ նաև մի շարք պրոբլեմների վրա, որոնց լուծումը կապահովի ձեռնարկության արտադրական գործունեության բարելավումը։

Ինստիտուտի կրտսեր գիտ. աշխատող Ս. Բաբայանի զեկուցումը նվիրված էր արտադրության մի շարք ռեզերվներին, որոնց օգտագործումը կնպաստի աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր ռեզերվներից են ձուլման առաջավոր տեխնոլոգիայի ներդրումը, մեխանիկական մշակման աշխատատարության կրճատումը ի հաշիվ թողուկների կրճատման։ Որպես օրինակ բերվեց կոկիլային ձուլման ներդրման հարցը։ Մի շարք դետալների թողուկները կազմում են համարյա նրանց քաշի կեսը։ Կոկիլային ձուլման եղանակի ներդրումը գործարանին թույլ կտա տարեկան տնտեսել մինչև 10 հազար ռուբլի։ Պնևմատիկ և հիդրավլիկ հարմարանքների ներդրումը կապահովի օժանդակ ժամանակի, ինչպես նաև խոտանի կրճատումը և արտապլանային խոտանի լիկվիդացումը։ Միայն արտապլանային խոտանը կազմում է 4,3 հազ. ռուբ., որի պատճառով մեկ բանվորի աշխատանքի արտադրողականությունը իջնում է 0,7 տոկոսով։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման էական ռեզերվներից է աշխատաժամանակի արդյունավետ և ռացիոնալ օգտագործումը։

Տնտեսագիտության ինստիտուտի աշխատակիցների բրիգադան 1961 թ. հունվար-փետրվար ամիսներին գործարանի մեխանիկական ցեխում անցկացրեց աշխատանքային օրվա լուսանկարում, մոմենտային դիտման մեթոդով։ Արդյունքը ցույց է տալիս, որ ինչպես բանվորների, այնպես էլ վարչա-կառավարչական ապարատի կողմից աշխատանքները վատ կազմակերպելու պատճառով աշխատանքային օրվա կորուստները կազմում են ժամանակի ընդհանուր բյուջեի ավելի քան 40 տոկոսը։

Զեկուցման մեջ նշվում են մի շարք կազմակերպչական ձեռնարկումներ, որոնց կիրառումը թույլ կտա ավելի էֆեկտիվ կերպով օգտագործել աշխատաժամանակը։

Կրտսեր գիտ. աշխատող Ռ. Բաբայանը իր զեկուցման մեջ ցույց տվեց, թե ինչպես արտադրական կարողությունների լավ օգտագործման միջոցով լուծվում են խոշոր ժողովրդատնտեսական խնդիրները։ Ֆ. Ձերժինսկու անվան գործարանի հիմնական ֆոնդերը ունեն անբավարար բեռնվածություն։ Մեխանիկական ցեխի հատուկ և ագրեգատային սարքավորումների արժեքը կազմում է ամբողջ ցեխի սարքավորման արժեքի 65 տոկոսը, և գործարանի սարքավոր-

ման 42 տոկոսը։ Մինչդեռ այդ սարքավորումների աշխատաժամանակի միայն 25—35 տոկոսն է արտադրողաբար օգտագործվում։ Այնուհետև ցույց է տրված, որ ձեռնարկության հիմնական արտադրական ֆոնդերը կազմում են նախագծով նախատեսվածի 106 տոկոսը, այնինչ՝ թողարկվող արտադրանքի ծավալը կազմում է նախագծային ծավալի մինչև 50 տոկոսը։ Զեկուցողը նշեց հիմնական ֆոնդերի և արտադրական կարողությունների օգտագործման բարելավման ուղիները։

«Աշխատավարձի կազմակերպման բարելավման մի քանի խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Վ. Գրիգորյանը։ Զեկուցման մեջ տրվեց սոցիալիզմի ժամանակ աշխատանքի արդյունքների նկատմամբ աշխատողների նյութական շահագրգռվածության ապահովման սկզբունքը, աշխատանքի արտադրողականության, աշխատավարձի կապը և նրանց փոխադարձ ներգործությունը։ Աշխատավարձի ձևի ճիշտ ընտրությունն ու կիրառումը կարող է էֆեկտիվ լինել այն դեպքում, երբ որակական ցուցանիշների համար կիրառվում է խրախուսման համապատասխան սիստեմ։ Մինչդեռ խրախուսման սիստեմը գործարանում լրիվ բացակայում է։ Զեկուցողը առաջ քաշեց բարձր և ցածր վարձատրվող բանվորական խմբերի աշխատավարձի տարբերությունները կրճատելու և կարգավորելու մի քանի հարցեր։

Զեկուցումներից հետո տեղի ունեցավ մտքերի լայն փոխանակություն։

Մեխանիկական ցեխի կոմունիստական աշխատանքի բրիգադայի բրիգադիր Է. Սեդրակյանը իր ելույթում ընդգծեց սարքավորման պահպանման և բարձր որակի նորոգման կարևորությունը, ինչպես նաև բրիգադայի ներսում աշխատանքի կազմակերպման կատարելագործման հարցերը։

Ավագ գիտ. աշխատող Վ. Խոջաբեկյանը կանգ առավ աշխատաժամանակի կորուստների և արտադրության ռիթմիկ կազմակերպման բարելավման հարցերի վրա։ Աշխատանքի և աշխատավարձի բաժնի պետ ընկ. Վ. Տոնոյանը ցույց տվեց, որ գործարանի աշխատանքի և աշխատավարձի կազմակերպման գործում դեռ կան լուրջ թերություններ։ Մի շարք միջոցառումների շնորհիվ այդ հարաբերությունը, ըստ ձուլման ցեխի, բերվեց համապատասխանության։ Միաժամանակի աշխատանքի պլանավորման մեջ տեղ գտած թերությունները վերացնելու համար կազմվել է աշխատանքի նորմավորման գրաֆիկ։ Մեխանիկական ցեխի բանվոր ընկ. Կ. Մաղոյանը խոսեց ԵԱ մյուս ինստիտուտների, մասնավորապես տեխնիկական թերում ունեցող ինստիտուտների և գործարանի կապի անհրաժեշտության մասին։ Այդ կապը կնպաստի թողարկվող հաստոցների տեխնոլոգիան և կոնստրուկցիան բարելավելուն։ Կոնֆերանսում ելույթ ունեցան նաև պլանային-արտադրական բաժնի պետ Կ. Կեորկովը և կրտսեր գիտ. աշխատող Է. Աղաբաբյանը։

Տնտեսագիտության ինստիտուտի արդյունաբերության էկոնոմիկայի սեկտորի վարիչ Ս. Ջրաղացպանյանը նշեց ինստիտուտի ուժերով կոնկրետ էկոնոմիկան ուսումնասիրողների խմբեր կազմակերպելու անհրաժեշտությունը։ Խմբերում կարելի է ընդգրկել ինչպես բանվորներին, այնպես էլ ինժեներա-տեխնիկական աշխատողներին։ Այդ միջոցառումը կբարձրացնի նրանց տնտեսական գիտելիքների մակարդակը և կարևոր պայման կհանդիսանա արտադրական ռեզերվների հայտարերման, մոբիլիզացման և օգտագործման ուղղությամբ։ ՀՍՍՌ Ժողտնտխորհի Մեքենաշինության և հաստոցաշինության գլխավոր ինժեներ Վ. Խուրլարյանը իր ելույթում ողջունեց ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի նախաձեռնությունը, նշեց կոնֆերանսի կարևորությունը՝ ներարտադրական ռեզերվների հայտարերման և օգտագործման կարևորության ասպարեզում։

Ռ. Գ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Տ. ՇԵՎՉԵՆԿՈՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի որոշմամբ աշխարհի առաջադեմ մարդկությունը մարտ ամսին նշեց ուկրաինական ժողովրդի մեծ դավակ, խոսքի հանճարեղ վարպետ Տարաս Գրիգորևիչ Շևչենկոյի մահվան 100-ամյակը։ Այդ նշանավոր տարեթվին էր նվիրված Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի մարտի 18-ի գիտական սեսիան։

Իր բացման խոսքում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Կարինյանը Շևչենկոյին բնութագրեց որպես իր ժողովրդի և աշխատավոր մարդկության վշտերի մեծ երգչի, որի ողջ ստեղծագործությունը մի համաբնակ կոչ էր ընդդեմ բռնության ու